



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 15 ՌԵՎԵՆԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

**Փայլին արդարքն յարքայութեան, եւ ճգնաւորքն՝ ի Հանգստեան,
Մարտիրոսքն պսակին, եւ կուսանաց լապտերք վառին.
Դասեցո՛, Տէ՛ր, ընդ նոսին, որք գլխէդ Աստուած խոստովանին,
Արդարութեամբ մի՛ դտեսցին, այլ գթութեամբ Քո քաւեսցին:**

ԱՊՈԹՔ

Արդար դատաւոր, երբ Հօր փառով դատելու գաս ողջերն ու մեռածները, դատաստանի մի՛ նստիր քո ծառաներուդ հետ, այլ փրկէ՛մեզ յաւիտեանական կրակէն, եւ լսել տուր մեզի ուրախալի հրաւերը արդարներուն՝ մտնելու երկնքի Արքայութիւնդ. ողորմէ՛ քո արարածներուդ քո մեծ ողորմութեամբդ: Քեզի կը վայելէ փառք, պատիւ եւ երկրպագութիւն, յաւիտեանս ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

ՍԱՂՄՈՍ 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Արդարահատոյց Աստուած,
դուն՝ Տէր, արդարահատոյց Աստուած, ցոյց տուր արդարութիւնդ:
Եւ, ով Դատաւոր ամբողջ աշխարհի,
ամբարտաւան մարդոց հատուցանէ արժանին:
Մինչեւ ե՞րբ, Տէր, մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,

չարագործները գոռոզ խօսքերով պիտի արտայայտուին,
եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:
Քու ժողովուրդդ կը նզմեն, ով Տէր, կը չարչարեն քեզի
պատկանողները,
այրիներն ու պանդուխտները կը սպաննեն, եւ որբերը կը կոտորեն,
ըսելով.- "Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը
այս բաներուն ուշադրութիւնը չի դարձներ":
Յիմար մարդիկ, հասկցէ՛ք, դուք՝ անմիտներ, ե՞րբ պիտի սորվիք:
Ան՝ որ ականջը ստեղծեց՝ ինք չի՞ լսեր,
ան՝ որ աչքը գոյացուց՝ ինք չի՞ տեսներ:
Ան՝ որ ազգերը կը սաստէ եւ իր գիտութեան մէջ կը դաստիարակէ՝
նաեւ զանոնք պիտի չդատապարտէ՞:
Տէրը գիտէ ինչ որ մարդիկ կը խորհին,
եւ անոնց խորհուրդներուն ոչնչութիւնը ըլլալը:
Երանի այն մարդուն, ով Տէր, որ դուն ինքդ կը սրբագրես,
եւ Օրէնքովդ կը դաստիարակես:
Դժբախտութեան օրերուն հանգստութիւն կուտաս անոր,
մինչեւ որ ամբարիշտին խորխորատը պատրաստուի:
Որովհետեւ Տէրը չի մոռնար իր ժողովուրդը,
բնաւ չի լքեր անոնք՝ որոնք իրեն կը պատկանին,
մինչեւ դատաստանի մէջ արդարութիւնը վերահաստատուի,
եւ սրտով ուղիղները արդարութեան հետեւին:
Ո՞վ իմ դատս պաշտպանեց՝ չարագործներուն դէմ,
ո՞վ ինծի թիկունք կանգնեցաւ՝ անիրաւութիւն գործողներուն դէմ:
Եթէ Տէրը ինծի չ'օգնէր՝
չատոնց Լոութեան աշխարհին բնակիչ եղած կ'ըլլայի:
Ամէն անգամ որ խորհեցայ՝ թէ իյնալու վրայ եմ,
բու սէրդ, Տէր, օգնութեան հասաւ ինծի:
Ամէն անգամ որ բազմացան մտահոգութիւններս,
միփաթեցիր եւ հրնուեցուցիր սիրտս:
Քեզի հետ ի՞նչ կապ կրնան ունենալ
անօրէնութեան աթոռին նստողները,
որոնք օրէնքը անիրաւութեան կը ծառայեցնեն,
որոնք արդարը որսալու համար կը միաբանին,
եւ անմեղը մահուան կը դատապարտեն:
Սակայն Տէրն է ապաստանս,
իմ Աստուածս է Վէմս՝ որուն ես կ'ապաւինիմ:
Եւ ինք՝ Տէրը անիրաւներուն պիտի հատուցանէ՝
իրենց անիրաւութեան համաձայն.
իրենց իսկ գործած չարութեամբ զանոնք պիտի բնաջնջէ:
Այո, Տէրը՝ մեր Աստուածը՝ զանոնք պիտի բնաջնջէ:

ԱՍՏՈՒԿԾ ԲՈՒՈՐԻՆ ԴԱՏԱԴՈՐԸ

Անցեալ 93-րդ Սաղմոսը Տէրը ներկայացուց որպէս Թագաւոր համայն աշխարհին, իսկ այս անգամ, 94-րդ Սաղմոսը՝ Աստուած բոլորին Դատաւորը: Յիշեցման կարգով, այս Սաղմոսը Դաւիթի ժողովածուէն քաղուած Սաղմոս է: Վերյիշենք Դաւիթի պարագան, եւ իր այդ կացութեան լոյսին փակ կարդալու այս Սաղմոսը: Սաղմոս մը, աղօթք խնդրանք մը, որ ոչ միայն Դաւիթին յարուկ է, այլ բոլոր անոնց, որոնք Դաւիթի նման այդպիսի պարագաներու մէջէն կ'անցնին, առաւել եւս Սաղմոս մը, այսօրուան Եկեղեցիին համար եւս: Սաղմոս մը, որ այսօր մեզմէ իւրաքանչիւրին համար գրուած ըլլայ կարծէք, եւ իւրաքանչիւրիս աղօթքը: Երբ Եկեղեցի կ'ըսեն, նկարի ունիմ Բրիսպոսի Եկեղեցին: Առաջին իսկ արտայայտութեամբ Դաւիթ զԱստուած կը ճանչնան իբրեւ Դատաւոր, եւ համայն աշխարհին Դատաւոր, առաւել եւս արդարօրէն հապուցում ընող Դատաւոր, ի դիմաց անիրաւ դատաւորներուն: Դաւիթ կը խնդրէ որ Աստուած Ինքզինք ցոյց փայ, եւ արդարութեամբ դարձնէ ամբարշտական մարդիկը: 3-11 համարները կը ներկայացնէ նախ թէ մինչեւ ե՞րբ Տէրը պէտք է որ սպասէ, մանաւանդ երբ ամբարիշտները յոխորփանքով, չարագործները գոռոզ խօսքերով եւ իրենց չարիքներով կը հպարտանան: Աստուծոյ ժողովուրդը կը ճգնեն, կը սպաննեն ու կը կոտորեն, ու մանաւանդ՝ իրենք զիրենք այնպէս մը կը մխիթարեն ըսելով. "Թէ Տէրը չի փեսներ, ուշադրութիւն չի դարձներ": Որովհետեւ ահաւասիկ այսքան չարիք կը գործենք, ո՞վ կը նայի, ընդհակառակը յաջողութիւն ալ կը գտնենք: Բայց Դաւիթ կը զգուշացնէ, ըսելով. "ով անմիտ-ներ, ան որ ականջը սրեղծեց, ան որ աչքը գոյացուց, ուրեմն կը լսէ ու կը փեսնէ: Տակաւին, Տէրը նաեւ գիտէ որ անոնց ծրագիրներն ու խորհուրդները ոչնչութիւն են: Հերաքրքրական է, որ մէկ կողմէ ամբարիշտները Տիրոջ ժողովուրդը կը ճգնեն, մինչ Տէրը այդ մէկը կ'օգտագործէ Իր ժողովուրդը դաստիարակելու եւ անով սրբագրելու զիրենք, մինչեւ որ հասնի պահը դատաստանի: 16-19 համարները մխիթարութեան եւ յոյսի արտայայտութիւն , որ երբ նեղութեան ու մտահոգութիւններ պահեր եկան, Տէրը Իր սիրովը օգնութեան հասաւ ու մխիթարեց եւ հրճուանք պարճառեց: Իսկ վերջին բաժինը, 20-23 համարները, համեմա-դական է որ կ'ընէ Աստուծոյ եւ անօրէնութիւն գործողներուն, որոնք օրէնքը անիրաւութեան վերածելով անմեղը կը հալածեն ու կ'ուզեն մահուան դատապարտել: Սակայն ինչ ալ ըլլան պայմանները, Տէրն է ապաստանս, Վէմս, եւ փերը Ինք պիտի հապուցանէ իրենց անօրէնութեան համաձայն, այսինքն՝ արդարութեամբ եւ ոչ թէ վրէժխնդրութեամբ:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
 ի ննջել եւ յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ քաղմամեղիս:*